ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Սեպտեմբերի 23-ին՝ ժամը 11.30-ի, տեղի ունցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ: Խորհրդի 25 անդամներից ներկա էին 22-ը:

Օրակարգ՝

1. Ֆակուլտետի խորհրդի նոր կազմի ձևավորման մասին:	Հ. Խաչատրյան
2. Ֆակուլտետի խորհրդի 2021-2022 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում:	Հ. Խաչատրյան
3.Ֆակուլտետի ամբիոնների աշխատանքային պլանների և նիստերի օրակարգերի քննարկում և հաստատում:	Ամբիոնների վարիչներ
4.Կրթության որակի ապահովման աշխատանքների ներկայացում: Որակի բարելավման ուղղված գործընթացների մշտադիտարկում և արդյունքների գնահատում:	Լ.Պողոսյան Ամբիոնային պատասխանատուներ
5. Ուսումնական գործընթացի կազմակերպման հարցեր:	Ա. Դալլաքյան

2020-2021 ուստարվա քննաշրջանի և լուծարային փուլերի արդյունքներ:

- առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի կրթական ծրագրերի (1-3-րդ կուրսեր) և մագիստրոսի (առկա՝ 1-ին կուրսեր, հեռակա՝ 1-2-րդ կուրսեր) կրթական ծրագրերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի լուծարային փուլերի արդյունքներ,
- 2020-2021 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 4-րդ կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակների քննաշրջանների արդյունքների:

6.Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների մասին.	Ա. Միքայելյան Ա. Ղազարյան

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսեր (ուսումնաճանաչողական պրակտիկա),
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսեր (ամփոփիչ-գնահատողական պրակտիկա)

7.Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի	Հ. Խաչատրյան Ամբիոնների վարիչներ

թեմաների քննարկում:

Հետազոտական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ
կատարված աշխատանքների ներկայացում:
8.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - 1. Ֆակուլտետի խորհրդի նոր կազմի ձևավորման մասին:

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան

Դեկան Հ.Խաչատրյանը ներկայացրեց 2021-22 ուսումնական տարվա ֆակուլտետի խորհրդի կազմը, խորհրդում ընդգրկված նոր անդամներին: Նա տեղեկացրեց, որ խորհրդի կազմում կատարված փոփոխությունները պայմանավորված են խորհրդի անդամ հանդիսացող մի քանի ուսանողների՝ համալսարանն ավարտելու հանգամանքով և նրանց այլ ուսանողներով փոխարինելու անհրաժեշտությամբ (կից՝ֆակուլտետի ուսանողական խորհրդի նիստի քաղվածքը):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Ք.Հովհաննիսյանը, Լ. Պողոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - 2.Ֆակուլտետի խորհրդի 2021-2022 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում:

Զեկուցող՝Հ.Խաչատրյան

/Աշխատանքային պլանը կցվում է/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյանը, Եվա Մնացականյանը, Ա.Մարտիրոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2021-2022 ուսումնական տարվա Սկզբնական կրթության ֆակուլտետի աշխատանքային պլանը:

ԼՍԵՑԻՆ - 3. Ֆակուլտետի ամբիոնների աշխատանքային պլանների և նիստերի օրակարգերի քննարկում և հաստատում:

Զեկուցող՝ամբիոնների վարիչներ

/Աշխատանքային պլանները կցվում են/

Վ. Կարապետյանը ներկայացրեց, որ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների բաշխման գործընթացը դեռևս ավարտված չէ, և ամբիոնի աշխատանքային պլանը վերջնական տեսքով կներկայացվի հաջորդ նիստին:

Գյուլամիրյանը տեղեկացրեց, որ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաներն ուսանողների կողմից ընտրվել են, սակայն վերջնական կներկայացվեն հաստատման ուսանողների և ղեկավարների հանդիպումներից հետո: Իսկ ամբիոնի աշխատանքային պլանը ներկայացված է:

Ք.Հովհաննիսյաը տեղեկացրեց, որ ամբիոնի աշխատանքային պլանի թղթային և էլեկտրոնային տարբերակները ներկայացված են: Նա նաև նշեց, որ աշխատանքային պլանը կազմելիս հաշվի են առել նաև ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանի քայլերն ու քննարկվելիք հարցերը, որոշ հարցեր ընդգրկել ամբիոնային պլանում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Խուգեյանը, Գ.Հայրապետյանը, Ս.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հաստատել 2021-2022 ուսումնական տարվա Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի, Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնների աշխատանքային պլանները:

2. Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի աշխատանքային պլանի հաստատման հարցը հետաձգել հաջորդ նիստին:

ԼՍԵՑԻՆ - **4.** Կրթության որակի ապահովման աշխատանքների ներկայացում: Որակի բարելավմանն ուղղված գործընթացների մշտադիտարկում և արդյունքների գնահատում:

Զեկուցող՝ Լ.Պողոսյան

/Զեկուցումը կցվում է/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ. Խաչատրյանը, Ք.Հովհաննիսյանը, Եվա Մնացականյանը,

Լ.Տեր-Գրիգորյանը:

Հեղինե Խաչատրայանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ համաձայն նախորդ ուսումնական տարվա վերջին խորհրդի նիստի որոշման՝ ֆակուլտետի և ամբիոնների որակի պատասխանատուները ամռանը կազմակերպել են առցանց սեմինարներ ֆակուլտետի, ամբիոնների դասախոսների համար, որտեղ ներկայացվել են որակի փաստաթղթերը, քննարկվել՝ դասընթացների առարկայական նկարագրերը, ուսումնամեթոդական փաթեթները, այդ փաստաթղթերին համապատասխան կազմելու հարցերը:

Ք.Հովհաննիսյանն նշեց, որ եթե ինքնուրույն աշխատանքներում հետազոտական բաղադրիչում մանկավարժական ու մեթոդական խնդիրներին բավարար տեղ տրվի, կուրսային և ավարտական աշխատանքներում մանկավարժական ու մեթոդական բաժինների ընդգրկման և իրականացման հարցը բավականաչափ կհեշտանա: Ք.Հովհաննիսյանը հավելեց, որ մնացորդային գիտելիքների ստուգումը ուժեղ կողմ կլինի դասընթացների վերանայման համար:

Եվա Մնացականյանն ասաց, որ ամառվա ընթացքում Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը ծանոթացել է խնդիրներին, աշխատանքներ կատարվել են, բայց ավելի կխորացվեն։

Լ.Տեր-Գրիգորյանը նշեց, որ Մայրնիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում կատարվում է նաև մեկնարկային գիտելիքների ստուգում, որի արդյունքները հետագայում պետք է համեմատվեն վերջնարդյունքների հետ։ Բացի դրանից, այս տարի արդեն փոփոխություն է կատարվել ստուգման որոշ ձևերի մեջ։

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն։

ԼՍԵՑԻՆ - 5. Ուսումնական գործընթացի կազմակերպման հարցեր։

2020-2021 ուստարվա քննաշրջանի և լուծարային փուլերի արդյունքներ.

- առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի կրթական ծրագրերի (1-3-րդ կուրսեր) և մագիստրոսի (առկա՝ 1-ին կուրսեր, հեռակա՝ 1-2-րդ կուրսեր) կրթական ծրագրերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի լուծարային փուլերի արդյունքներ,
- 2020-2021 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 4-րդ կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակների քննաշրջանների արդյունքների։

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունները կցվում են/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Միքայելյանը, Գ.Հայրապետյանը, Ք.Ասմարյանը։

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն։

ԼՍԵՑԻՆ - 6.Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների մասին.

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսեր (ուսումնաճանաչողական պրակտիկա),
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսեր (ամփոփիչ-գնահատողական պրակտիկա)

Զեկուցողներ՝Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան

/Հաշվետվությունները կցվում են/

Ա. Միքայելյանը տեղեկացրեց, որ առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Շառյան Արմինեն դիմել է՝ պրակտիկան իրենց գյուղում անցկացնելու խնդրանքով, քանի որ նա ունի առողջական լուրջ խնդիրներ՝ երկրորդ կարգի հաշմանդամ է և տեղաշարժվելու դժվարություն ունի։ Ա. Միքայելյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ նախորդ

մանկավարժական պրակտիկան ուսանողուհին, համաձայն իր դիմումի և ներկայացրած փաստաթղթերի, իրականացրել է իր բնակավայրում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյանը, Ք. Հովհաննիսյանը, Հ.Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Շառյան Արմինեի վերաբերյալ պրակտիկայի ղեկավարի հաղորդումը ընդունել ի գիտություն, հարցը պահել ուշադրության կենտրոնում և քննարկել համալսարանի պրակտիկայի վարչության հետ:

ԼՍԵՑԻՆ- 7. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում:

Հաղ.՝Հ.Խաչատրյան, ամբիոնների վարիչներ

Ջ.Գյուլամիրյանը ներկայացրեց, որ Ա.Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում ԲԿԾԱ 4-րդ կուրսերի ավարտական աշխատանքների թեմաների բաշխման և ղեկավարների ընտրության աշխատանքներն ավարտված են: ԲԿԾՀ 5-րդ և ՄԿԾԱ 1-ին կուրսերի թեմաների բաշխումն ընթացքի մեջ է, մնում է ՄԿԾՀ առաջին կուրսի մագիստրոսների հարցը:

Ք.Հովհաննիսյանը նշեց, որ Մաթեմատիկայի և տարրական ուսուց-ման մեթոդիկայի ամբիոնում ևս ընթանում են թեմաների վերանայման, թարմացման և բաշխման աշխատանքներ: Իրականացվում է ՄԿԾՀ 3-րդ կուրսի մագիստրոսական աշխատանքների համակարգում: ՄԿԾԱ 2-րդ կուրսի հետ հանդիպումներ են նախատեսվում հոկտեմբերից սկսած՝ ամեն ամիս. Ուսանողներն ու ղեկավարները պետք է հաշվետվություն ներկայացնեն կատարած աշխատանքի ծավալի և ընթացքի վերաբերյալ: ՄԿԾԱ 1-ին կուրսում դռևս ծանոթանում են ուսանողների մասնագիտություններին՝ թեմաները համապատասխանեցնելու նպատակով: ԲԿԾԱ 4-րդ և ԲԿԾՀ 5-րդ կուրսերի աշխատանքներն առայժմ ընթացքի մեջ են, լավ կլինի թողնել հոկտեմբերի նիստին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Լ.Պողոսյանը, Ա.Դալլաքյանը, Վ.Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ առաջիկա օրերին ամփոփել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների բաշխման և ղեկավարների ընտրության աշխատանքները և թեմաների ցանկերն ավարտուն տեսքով ներկայացնել դեկանատ՝ խորհրդի հաջորդ նիստով հաստատելու համար:

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ - 1. Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի դասախոսներ Բ.Բ.Ներսիսյանի և Ա.Գ.Կարապետյանի *«Մաթեմատիկայի հանրագիտարան»* գիրքը հրատարակության երաշխավորելու հարցը:

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Գ.Հայրապետյանը, Զ.Գյուլամիրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Միջնորդել համալսարանի գիտական խորհրդին՝ Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոիկայի ամբիոնի դասախոսներ Բ.Բ.Ներսիսյանի և Ա.Գ.Կարապետյանի *«Մաթեմատիկայի հանրագիտարան»* գիրքը հրատարակության երաշխավորելու համար:

Անցավ միաձայն:

ԼՍԵՑԻՆ - 2. Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի միջնորդությունը Սկզբնական կրթության ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի առկա 4-րդ և հեռակա 5-րդ կուրսի ուսումնական պլաններում «Գործնական գրությունների ուսուցում» դասընթացը՝ 4 կրեդիտ, «Մայրենի լեզու» դասընթացով փոխարինելու հարցը:

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան

/Անհրաժեշտ փաստաթղթերը կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Լ.Պողոսյանը, Լ.Տեր-Գրիգորյանը, Ե.Մնացականյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Դիմել ՀՊՄՀ ուսումնական մաս և Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչություն՝ «Տարրական մանկա-վարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի առկա 4-րդ և հեռակա 5-րդ կուրսի ուսումնական պլաններում «Գործնական գրությունների ուսուցում» դասընթացը «Մայրենի լեզու» դասընթացով փոխարինելու առաջարկությամբ:

Անցավ միաձայն:

ԼՍԵՑԻՆ - 3. 2021-2022 ուսումնական տարում «Նախադպրոցական մանկա-վարժություն և մեթոդիկա» մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագրով հեռակա ուսուցում կազմակերպելու հարցը:

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան

/Անհրաժեշտ փաստաթղթերը կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Վ.Կարապետյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ՀՊՄՀ ուսումնական մաս և Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչություն ներկայացնել «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագրով հեռակա ուսուցում կազմակերպելու գործընթացին վերաբերվող ուսումնական ողջ փաթեթը՝ հարցին ընթացք տալու առաջարկությամբ:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2021թ. սեպտեմբերի 24-ին տեղի ունեցավ սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը՝ բանավոր հարցմամբ:

Խորհրդի 25 անդամներից ներկա էին 25-ը:

ՕՐԱԿԱՐԳ - *ՀՊՄՀ հոգաբարձուների խորհրդի կազմում թեկնածու առաջադրելու հարցը:*

Զեկ.՝Հ. Խաչատրյան

ԼՍԵՑԻՆ – ՀՊՄՀ հոգաբարձուների խորհրդի կազմում թեկնածու առաջադրելու հարցը:

Զեկ.՝Հ. Խաչատրյան

Հ.Խաչատրյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ ՀՊՄՀ հոգաբարձուների խորհրդի կազմը ձևավորելու նպատակով ֆակուլտետը պետք է համալսարանի հոգաբարձուների խորհրդի անդամության թեկնածուներ առաջադրի:

Նա առաջարկեց խորհրդի անդամներին ՀՊՄՀ հոգաբարձուների խորհրդի անդամության թեկնածուներ առաջադրել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա.Թոփուզյանը, Ս.Մարությանը, Ք.Հովհաննիսյանը, Ջ.Գյուլամիրյանը:

Նրանք բոլորը առաջադրեցին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Մուշեղի Ղազարյանի թեկնածությունը:

Էդուարդ Մուշեղի Ղազարյանի թեկնածությունը դրվեց բաց քվեարկության: Քվեարկության արդյունքում՝ կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնաh՝0:

ՈՐՈՇԵՑԻՆ – ՀՊՄՀ հոգաբարձուների խորհրդի կազմում առաջադրել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Մուշեղի Ղազարյանի թեկնածությունը:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Հոկտեմբերի 25-ին՝ ժամը 11.00-ին տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը *(բանավոր հարցում):*

Խորհրդի 25 անդամներից ներկա էին 24-ը։

Օրակարգ՝

«ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողներին անվանական կրթաթոշակների տրամադրման» կարգի 7-րդ կետին հավակնորդ սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողների թեկնածություններ առաջադրելու հարցը:

Լսեցին- «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողներին անվանական կրթաթոշակների տրամադրման» կարգի 7-րդ կետին հավակնորդ սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողների թեկնածություններ առաջադրելու հարցը:

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան

Որոշեցին- «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողներին անվանական կրթաթոշակների տրամադրման» կարգի հավանաձայն՝ կրթաթոշակի ներկայացնել Սկզբնական կրթության ֆակուլտետի Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Ջուլիետա Արթուրի Մանուկյանի թեկնածությունը։

Կողմ՝ 23, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1։

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

Նոյեմբերի 2-ին՝ ժամը 14.20-ին, տեղի ունցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ: Խորհրդի 25 անդամներից ներկա էին 21-ը:

Օրակարգ՝

1. Ավարտական աշխատանք (առկա ուսուցման համակարգի բկծ 4-րդ և հեռակա ուսուցման համակարգի բկծ 5-րդ կուրսեր), մագիստրոսական թեզ գրող ուսանողների (առկա և հեռակա ուսուցման համակարգերի մկծ 1-ին կուրսեր) ղեկավարների և թեմաների հաստատում:	Հ. Խաչատրյան, ամբիոնների վարիչներ
2. Կրթության որակի բարելավմանն ուղղված անելիքների մասին:	Լ.Պողոսյան, ամբիոնների պատասխանատուներ
3. Ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության աշխատանքային պլանների քննարկում և հաստատում:	ՈՒԽ և ՈՒԳԸ, նախագահներ
4.Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների մասին. • հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրս (մանկավարժահետազոտական պրակտիկա) • առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրերի 2-րդ կուրսեր (մանկավարժահետազոտական պրակտիկա)	Ա.Միքայելյան, Ա.Ղազարյան, Լ.Պողոսյան
5.Հեռակա ուսուցման համակարգում կրթական, ուսումնական գործընթացին առնչվող հարցերի քննարկում:	Ա. Դալլաքյան, ամբիոնների վարիչներ
6.Որակի ապահովման և մաթեմատիկայի դասավանդման բարելավման ուղղությամբ կատարված աշխատանքների և հետագա գործողությունների մասին:	Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ք.Հովհաննիսյան
7. Ընթացիկ հարցեր:	

ԼՍԵՑԻՆ - 1. Ավարտական աշխատանք (առկա ուսուցման համակարգի բկծ 4-րդ և հեռակա ուսուցման համակարգի բկծ 5-րդ կուրսեր), մագիստրոսական թեզ գրող ուսանողների (առկա և հեռակա ուսուցման համակարգերի մկծ 1-ին կուրսեր) ղեկավարների և թեմաների հաստատում:

Զեկուցողներ՝ Հ.Խաչատրյան, ամբիոնների վարիչներ

/Քաղվածքները կցվում են:/

Զ.Գյուլամիրյանը ներկայացրեց, որ Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի գծով ՄԿԾԱ և ՄԿԾՀ, ԲԿԾԱ և ԲԿԾՀ բոլոր ուսանողների ավարտական աշխատանքների ու թեզերի թեմաները հանձնարարված են, ուսանողների հանդիպումները ղեկավարների հետ տեղի են ունեցել և աշխատանքները սկսված են:

ՄԿԾՀ 3-րդ կուրսի մագիստրոսների աշխատանքներն ընթանում են բնականոն հունով. նոյեմբերից նախապաշտպանությունները կսկսվեն և նախապատրաստական աշխատանքները ժամանակին կավարտվեն: Խնդիր ունեցող ուսանողներ չկան:

Ք.Հովհաննիսյանը ներկայացրեց, որ Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնին կցված 26 ուսանողներից բացի՝ երկու ուսանող ևս ցանկություն են հայտնել մաթեմատիկայի ամբիոնում գրել ավարտական աշխատանքը: Ամբիոնն առաջարկում է ավելացնել ավարտական աշխատանք գրողների թույլատրելի քանակը:

Հեռակա մագիստրոսները թեև տարբեր մասնագիտություններ ունեցողներ են, սակայն շատ հետաքրքրված են, և ակտիվորեն մասնակցում են աշխատանքներին: Իրենց տրվել են բակալավրի վերջին երկու տարվա ծրագրերի սեղմագրերը, և արդեն նրանց հանձնարարված է լրացնել ԲԿԾ ծրագրի բացերը:

Առկա բակալավրիատում թեմաները բաժանված են և գործընթացները բնականոն ընթանում է:

Ս.Մարությանը տեղեկացրեց, որ նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի գծով բոլոր բաժիններում թեմաները բաժանված են և աշխատանքներն ընթացքի մեջ են: Նա նաև նշեց, որ հարկավոր է օգտվել այն հանգամանքից, որ ավարտական կուրսերում ուսանողները պրակտիկայի են, կարելի է ակտիվացնել թեզերի և ավարտական աշխատանքների հիմնախնդիրների ուսումնասիրությանն ուղղված աշխատանքները:

Մանկավարժության ամբիոնում ավարտական աշխատանքների և մագիստրոսայկան թեզերի թեմաների քննարկման և բաշխման վերաբերյալ աշխատանքները ներկայացրեց ամբիոնի ասիստենտ **Ա.Դալլաքյանը:** Նա ներկայացրեց, որ ըստ ուսանողների թվաքանակի՝ թեմաները բաշխված են, աշխատանքները բնականոն ընթանում են, և երկու ուսանող ավելի են գրանցվել մանկավարժության ամբիոնում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Լ.Պողոսյանը, Ա.Դալլաքյանը:

Ա.Դալլաքյանն ասաց, որ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի բաշխումները ըստ ամբիոնների որոշվում է նախապես, այն համաձայնեցվում է ամբիոնների վարիչների հետ,

սակայն ընթացքում հաշվի են առնվում նաև ուսանողների նախասիրություններն ու նախապատվությունները: Արդյունքում նախապես որոշված թվերում փոփոխություններ են լինում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ամբիոնների՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները:

ԼՍԵՑԻՆ - **2**. Կրթության որակի բարելավմանն ուղղված անելիքների մասին:

Զեկուցող՝ Լ.Պողոսյան, ամբիոնների պատասխանատուներ

/Զեկույցը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Եվա Մնացականյանը,Գյուլամիրյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **3.** Ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության աշխատանքային պլանների քննարկում և հաստատում:

Զեկուցողներ՝ ՈՒԽ և ՈՒԳԸ նախագահներ

/Աշխատանքային պլանները կցվումեն:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյանը, Ե.Մնացականյանը, Գ.Հայրապետյանը:

Ա.Դալլաքյանն առաջարկեց ՈՒԳԸ և ՈՒԽ աշխատանքային պլաններում ընդգրկել նաև ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված միջոցառումներ և այդ ուղղությամբ աշխատել ֆակուլտետի մյուս կառույցների հետ համատեղ:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հաստատել:

2. ՈՒԳԸ և ՈՒԽ աշխատանքային պլաններում ընդգրկել նաև համալսարանի 100-ամյակին նվիրված միջոցառումներ և աշխատանքներ:

ԼՍԵՑԻՆ - **4.**Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների մասին.

- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրս (մանկավարժահետազոտական պրակտիկա)
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրերի 2-րդ կուրսեր (մանկավարժահետազոտական պրակտիկա)

Զեկուցողներ՝ Լ.Պողոսյան, Ա.Միքայելյան, Ա.Ղազարյան

/Հաշվետվությունները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Ք.Հովհաննիսյանը, Ս.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - 5. Հեռակա ուսուցման համակարգում կրթական, ուսումնական գործընթացին առնչվող հարցերի քննարկում:

Զեկուցողներ՝ Ա. Դալլաքյան, ամբիոնների վարիչներ

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Միքայելյանը, Գ.Հայրապետյանը, Ք.Ասմարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ - Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի աշխատանքային պլանի և նիստերի օրակարգի քննարկում և հաստատում:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Վ. Կարապետյան

/Աշխատանքային պլանը կցվում է/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Խուգեյանը, Ս. Մարությանը, Լ.Տեր-Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2021-2022 ուսումնական տարվա Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի աշխատանքային պլանը:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

2021թ. նոյեմբերի 22-ին տեղի ունեցավ սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը՝ բանավոր հարցմամբ:

Խորհրդի 25 անդամներից ներկա էին 25-ը:

ՕՐԱԿԱՐԳ - «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2021 թվականի նոյեմբերի 11-ի և նոյեմբերի 16-ի, ինչպես նաև «Կրթություն» շաբաթաթերթի նոյեմբերի 17-ի համարներում՝ ՀՊՄՀ ռեկտորի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին թեկնածու առաջադրելու հարցը:

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան

ԼՍԵՑԻՆ – «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2021 թվականի նոյեմբերի 11-ի և նոյեմբերի 16-ի, ինչպես նաև «Կրթություն» շաբաթաթերթի նոյեմբերի 17-ի համարներում՝ ՀՊՄՀ ռեկտորի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին թեկնածու առաջադրելու հարցը:

Զեկ.՝ Հ. Խաչատրյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Ք.Հովհաննիսյանը, Ջ.Գյուլամիրյանը:

Նրանք առաջադրեցին ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Վոլոդյայի Խոեցյանի թեկնածությունը:

ՈՐՈՇՑԻՆ – Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ ռեկտորի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին առաջադրել ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար,

աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Վոլոդյայի Խոեցյանի թեկնածությունը:

Քվեարկության արդյունքում՝ խորհրդի 25 անդամներից կողմ՝ 25, դեմ՝0, ձեռնպահ՝0:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

Դեկտեմբերի 2-ին՝ ժամը 10.30-ին, տեղի ունցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի առցանց նիստ: Խորհրդի 25 անդամներից ներկա էին 24-ը:

Օրակարգ՝

1.Միջազգային համագործակցության և ծրագրերի մասին:	Լ.Պողոսյան
2.Ամբիոնների՝ դպրոցների, մանկապարտեզների և այլ կրթականհաստատությունների հետ համագործակցության մասին:	Ամբիոնների պատասխանատուներ
3. Ասպիրանտների ատեստավորման մասին:	Ամբիոնների վարիչներ
4.Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ հեռակա ուսուցման համակարգի 3-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերը հրապարակային պաշտպանության երաշխավորելու մասին:	Ամբիոնների վարիչներ
5. Մանկավարժական պրակտիկաների մասին.	
▪ առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի պրակտիկայի ընթացք (ուսումնաճանաչողական պրակտիկա),	Ա. Միքայելյան Ա. Ղազարյան Լ.Պողոսյան
▪ առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրերի 2-րդ կուրսերի և հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի պրակտիկայի արդյունքներ (մանկավարժահետազոտական պրակտիկա),	
▪ առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսեր (ամփոփիչ-գնահատողական) արդյունքներ և պրակտիկայի թղթապանակի	

պաշտպանության նախապատրաստում:

6. Ընթացիկ հարցեր:

- Հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ»,«Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ և 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի ընթացքի և արդյունքների մասին: — Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան
- Ֆակուլտետի տարեկան հաշվետվության քննարկում և հաստատում: — Հ.Խաչատրյան

ԼՍԵՑԻՆ - 1.Միջազգային համագործակցության ծրագրերի և նախագծերի մասին: *Զեկուցող՝ Լ.Պողոսյան*

/Զեկուցումը կցվում է:/

Հ.Խաչատրյանի հարցին ի պատասխան՝ Լ.Պողոսյանը ներկայացրեց, որ մեդիակրթության վերաբերյալ միջազգային գիտաժողովի հայտարարությունը եղել է դեռևս հոկտեմբերի վերջին, և համագործակցող բուհերից ստացվել են արդեն հոդվածներ: Պասիվ են եղել սկզբնական ֆակուլտետի ամբիոնները: Թեև կան երկու-երեք դասախոսներ, որոնք արդեն ներկայացրել են իրենց հոդվածները, սակայն ֆակուլտետի դասախոսների վերջնական պատրաստ լինելուց հետո է, որ ճիշտ կլինի կոնկրետ ժամանակ հայտարարելը:

Հ.Խաչատրյանը խնդրեց արագացնել, և այդ կոնֆերանսով համալսարանի 100-ամյակին նվիրված միջոցառումների մեկնարկը դնել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյանը, Ք.Ասմարյանը, Հ.Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.Ընդունել ի գիտություն:

2.Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ ակտիվացնել դասախոսների աշխատանքները առաջիկայում նախատեսվող մեդիակրթության վերաբերյալ գիտաժողովին հոդվածներ պատրաստելու ուղղությամբ:

ԼՍԵՑԻՆ - 2. Ամբիոնների՝ դպրոցների, մանկապարտեզների և այլ կրթական հաստատությունների հետ համագործակցության մասին:

Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ

Վ.Կարապետյանը ներկայացրեց, որ նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկայի ամբիոնն ակտիվ համագործակցում է մանկապարտեզների հետ: Բայց հիմա նոր ծրագրերի շուրջ են աշխատում՝ հատկապես մանկավարժական պրակտիկայի իրականացման առումով: Կարևորվում է ոչ միայն ուսանողների կողմից մանկապարտեզից նոր գիտելիքներ և պրակտիկ փորձ ձեռք բերելու, այլև հենց մանկապարտեզ նորություններ տանելու հարցը: Դրա համար անհրաժեշտ է նախապատրաստական աշխատանք տանել:

Շախմատի ծրագիրը ՖԻԴԵ-ի կողմից նախատեսված մանկապարտեզների համար շարունակվում է, այժմ մոնիթորինգի և հետադարձ կապի ապահովման աշխատանքներ են կատարվում ամբիոնի մասնագետների կողմից: Հիմա ծրագիրը լավ է ընդունվում, և ամեն ինչ արվում է՝ որպեսզի ծրագիրը դառնա ոչ թե շախմատը շախմատի համար, այլ ազդի նախադպրոցականի խոսքի զարգացման վրա մտածողության զարգացման վրա և այլն:

Լ.Տեր-Գրիգորյանը ներկայացրեց, որ մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում իրականացվել են այցելություններ դպրոցներ դիմորդներին կողմնորոշելու, համալսարանի և ֆակուլտետի գործունեությունը ներկայացնելու նպատակներով, սակայն համագործակցությունը դպրոցների հետ շարունակվում է նաև այլ ուղղություններով: Համագործակցությունը սերտացվում է ուսուցիչների վերապատրաստման դասընթացների համատեքստում:

Ք.Հովհաննիսյանը ներկայացրեց, որ մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնն այցելություններ է կատարել դպրոցներ և ապագա դիմորդներին կողմնորոշելու, համալսարանի և ֆակուլտետի գործունեությունը ներկայացնելու աշխատանքների վեկտորը, առաջնահերթությունները փոխվել են՝ կապված ընդունելության քննությունների մեջ մաթեմատիկայի/ օտար լեզու քննության պարտադիր ընդգրկման հետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, Ջ.Գյուլամիրյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - 3. Ասպիրանտների ատեստավորման մասին:

Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ

Ք.Հովհաննիսյանը ներկայացրեց, որ մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնը մեկ ասպիրանտ ունի՝ Տաթևիկ Հակոբյանը, կատարել է անհրաժեշտ աշխատանքները, նախապատրաստել է հոդված, հաշվետվությունը ներկայացրել է և երաշխավորվել է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ա.Դալլաքյանը, Ա.Միքայելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **4.** Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ հեռակա ուսուցման համակարգի 3-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերը հրապարակային պաշտպանության երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ

Ամբիոնները ներկայացրին, որ իրենց ամբիոններում մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունների ուղղությամբ աշխատանքներն այս պահի դրությամբ էլ ընթանում են, բոլոր մագիստրոսները և ղեկավարները ակտիվ աշխատում են հարթակում, ամբիոններում իրականացվել են նախնական լսումներ և այդ գործընթացը շարունակական է, առաջիկայում էլ նախատեսված են վերջնական նախապաշտպանությունները: Ավարտին ամբիոնները կներկայացնեն իրենց եզրակացությունները՝ ուսանողների թեզերը հրապարակային պաշտպանության երաշխավորելու մասին: Այս պահի դրությամբ մտահոգություններ, խնդիրներ չկան:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյան, Ք.Ասմարյանը, Հ.Խաչատրյանը, Գ.Հայրապետյանը:

Հ.Խաչատրյանը տեղեկացրեց, որ համաձայն շրջաբերականի պաշտոնական նախապաշտպանությունները նախատեսված ենդեկտեմբերի 21-28-ը: Ավարտին ամբիոնները պետք է համապատասխան քաղվածքներն ուղարկեն իրենց ամբիոնների գծով ուսանողներին հրապարակային պաշտպանության երաշխավորելու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ նախապաշտպանություններն ավարտելուց հետո՝ քաղվածքները համապատասխան եզրակացությամբ ներկայացնել դեկանատ:

ԼՍԵՑԻՆ - **5.** Մանկավարժական պրակտիկաների մասին (արդյունքներ, ընթացք)

- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքներ
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրերի 2-րդ կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքներ
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի ուսումնաճանաչողական պրակտիկայի ընթացք, առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական

մանկավարժություն և մեթոդիկա» «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսերի ամփոփիչ-գնահատողական պրակտիկաների ընթացք

Զեկուցող՝ Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան, Լ. Պողոսյան

/Հաշվետվությունները կցվում են:/

Ա.Ղազարյանի հաշվետվությունը ներկայացրեց Հ.Խաչատրյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ք.Հովհաննիսյանը, Վ.Կարապետյանը, Հ.Խաչատրյանը:

Ք.Հովհաննիսյանը նշեց, որ մագիստրատուրայի պրակտիկան շատ հաջողված էր, մագիստրոսներն էլ շատ մոտիվացված են աշխատել:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ - **6.1.** Հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ և 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի ընթացքի և արդյունքների մասին:

Զեկուցող՝ Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան

/Հաշվետվությունները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Լ.Պողոսյանը, Ա.Դալլաքյանը, Հ.Խաչատրյանը:

Հ.Խաչատրյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ և 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկաները սովորաբար կազմակերպվել են հունվար ամսին ուսումնական պարապմունքներից հետո, առաջնորդվել են շրջաբերականներով: Սակայն այս ուսումնական տարի պրակտիկայի վարչության հրահանգով առաջնորդվել են ուսումնական պլանով: Ըստ ուսումնական պլանի դրանք նախատեսված են նոյեմբեր ամսին: Դա է պատճառը, որ այս հարցը ընդգրկված չի եղել ֆակուլտետի աշխատանքային պլանում, և հետևաբար, այն ընդգրկվել է և լսվում է ընթացիկ հարցերի տակ:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2.Հավանություն տալ պրակտիկայի ղեկավարների՝ պրակտիկային հարգելի պատճառներով չմասնակցած ուսանողների մանկավարժական

պրակտիկան կազմակերպելու առաջարկներին: Դրանք կազմակերպել 2021-22 ուսամնական տարվա 1-ին կիսամյակում՝ հունվարյան ուսումնական պարապմունքներից հետո:

ԼՍԵՑԻՆ- 6.2. Ֆակուլտետի տարեկան հաշվետվության քննարկում և հաստատում:

Զեկուցող՝ Հ. Խաչատրյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ք.Հովհաննիսյանը, Լ.Պողոսյանը, Ս.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել սկզբնական կրթության ֆակուլտետի տարեկան հաշվետվությունը:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

Դեկտեմբերի 23-ին՝ ժամը 10.00-ին, տեղի ունցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ: Խորհրդի 25 անդամներից ներկա էին 23-ը:

Օրակարգ՝

1.2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման և քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին. • առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքներ, • հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսերի 1-ին կիսամյակի քննաշրջանի կազմակերպման աշխատանքներ, • հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներ:	Ա.Դալլաքյան
2. Հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողների ամփոփիչ ատեստավորման մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստական աշխատանքների մասին:	Ա.Դալլաքյան
3.Ամբիոնների՝ 2020-2021թթ. կատարած գիտական և հետազոտական աշխատանքների արդյունքների մասին:	Ամբիոնների վարիչներ
4. Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների և արդյունքների մասին:	Ա. Միքայելյան Ա. Ղազարյան
5.Անդրադարձ ֆակուլտետի ենթակառույցների կատարած աշխատանքներին: • Որակի ապահովման խումբ • Ուսումնամեթոդական խումբ • Համալսարան-դպրոց համագործակցություն, դիմորդների մասնագիտական կողմնորոշում • Կամավորական գործունեություն	Լ.Պողոսյան Ջ.Գյուլամիրյան Ա.Խուգեյան Ի.Պոնոմորենկո

6. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - 1.2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման և քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին.

- առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքներ,
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսերի 1-ին կիսամյակի քննաշրջանի կազմակերպման աշխատանքներ,
- հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներ:

Զեկուցող՝ Ա. Դալլաքյան

/Զեկուցումը կցվում է/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ. Խաչատրյանը, Եվա Մնացականյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **2**. Հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողների ամփոփիչ ատեստավորման մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ջ. Գյուլամիրյանը, Ա.Դալլաքյանը, Ք.Հովհաննիսյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ ամբիոններում նախապաշտպանություններն ընթանում են բնականոն հունով՝ ըստ նախապես որոշված ժամանակացույցի:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.Ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ մինչև ս/թ դեկտեմբերի 29-ը դեկանատ ներկայացնել նախապաշտպանությունների արդյունքների վերաբերյալ քաղվածքները:

ԼՍԵՑԻՆ - **3.** Ամբիոնների՝ 2020-2021թթ. կատարած գիտական և հետազոտական աշխատանքների արդյունքների մասին:

Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ

/Հաշվետվությունները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ա. Միքայելյանը, Ք.Ասմարյանը:

Հ.Խաչատրյանն անդրադարձավ առաջիկայում նախատեսված երկու գիտաժողովների կազմակերպման աշխատանքներին և նշեց, որ իրավիճակով պայմանավորված դրանք կարելի է կազմակերպել կա՛մ առերես, կա՛մ առցանց տարբերակներով: Գիտաժողովի զեկույցներն ու նյութերը ևս հնարավոր է տպագրել և տեղադրել առցանց տարբերակով՝ ապահովելով հեղինակային իրավունքներն ու բոլոր պահանջվող ընթացակարգերը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **4.**Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների և արդյունքների մասին:

Զեկուցող՝ Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան

/Հաշվետվությունները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ք.Հովհաննիսյանը, Ջ.Գյուլամիրյանը, Հ.Խաչատրյանը:

Դեկան Հ.Խաչատրյանը խնդրեց պրակտիկայի ղեկավարներին ուշադիր լինել այն ուսանողների հարցում, որոնց պրակտիկան հետաձգվել է և այնպիսիք, որոնք նոր պետք է վերականգնվեն տարկետումից, ուստի նրանց պրակտիկան պետք է կազմակերպվի երկրորդ կիսամյակում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - 5. Անդրադարձ ֆակուլտետի ենթակառույցների կատարած աշխատանքներին:

- Որակի ապահովման խումբ
- Ուսումնամեթոդական խումբ
- Համալսարան-դպրոց համագործակցություն, դիմորդների մասնագիտական կողմնորոշում
- Կամավորական գործունեություն

Զեկուցողներ՝ Լ.Պողոսյան, Ջ.Գյուլամիրյան, Ա.Խուգեյան, Ի.Պոնոմարենկո

/Զեկուցումները կցվում են/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Գ.Հայրապետյանը, Հ.Խաչատրյանը, Ք.Հովհաննիսյանը, Եվա Մնացականյանը, Ջ.Գյուլամիրյանը, Ա.Դալլաքյանը, Ա.Մարտիրոսյանը:

Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի վարիչի պաշտոնակատար Ք.Հովհաննիսյանը նշեց, որ ամբիոնը կարող է կազմակերպել առցանց և առերես խորհրդատվական աշխատանքներ մաթեմատիկայից սկզբնական կրթության ֆակուլտետ դիմողների համար: Նույն պատրաստակամությունը հայտնեց նաև Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ջ.Գյուլամիրյանը՝ նման խորհրդատվական հանդիպումներ կազմակերպել հայոց լեզվից ու գրականությունից:

Փոխդեկան Լուսինե Պողոսյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ ֆակուլտետի որակի ապահովման խմբի կողմից մշակվում են հարցաթերթիկներ ուսանողների բավարարվածությունը իրենց մասնագիտական կրթական ծրագրերից պարզելու համար: Հարցումները կկազմակերպվեն բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների շրջանում՝ առցանց:

Դեկան Հ.Խաչատրյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ 1-ին կիսամյակի կամավորական աշխատանքների արդյունքները շատ բազմազան են. կան ուսանողներ, ովքեր կեսից ընդհատել են կամավորական աշխատանքները, կան ուսանողներ, ովքեր ավարտին են հասցրել, բայց չեն ցանկացել մասնակցել արդյունքների ամփոփմանը և հաշվետվությունների ներկայացմանը, որոշ ուսանողների ներկայացրած

փաստաթղթերում անճշտություններ են եղել, ընթացակարգային շեղումներ, որոնք շտկել նրանք չեն ցանկացել:

Այս պահին դեռ շարունակվում են կամավորների աշխատանքների հաշվետվությունների ներկայացումները, այն կամավորների, որոնց փաստաթղթերը համապատասխանում էին սահմանված պահանջներին և որոնք ցանկություն էին հայտնել՝ ներկայացնելու իրենց աշխատանքների ամփոփ արդյունքները: Արդյունքները հաջորդիվ կներկայացվեն խորհրդի հաստատմանը:

Հ.Խաչատրյանը նշեց նաև, որ կամավորական գործունեություն կարելի է ծավալել նաև բուհում, մասնավորապես ֆակուլտետի խաղերի կենտրոնում, միայն թե դրա համար հարկավոր է ունենալ կամավորական աշխատանքի հստակ գործառույթներ, որոնք կարող են կատարել ուսանողները խաղերի կենտրոնում:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:
2. Միավորներ չհավաքած, բայց կամավորական աշխատանքները մինչև վերջ կատարած ուսանողներին տրամադրել հավաստագրեր:

3. Հաձնարարել Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ պարոն Կարապետյանին՝ մշակել և ներկայացնել կոնկրետ և հստակ գործառույթների շրջանակ խաղերի կենտրոնում կամավորական աշխատանքներ ծավալելու համար:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ – 1. Մանկավարժական գիտությունների թեկնածու, Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոս Մարիաննա Գիգոլի Ամիրաղյանին մանկավարժության գծով դոցենտի գիտական կոչում երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ջ.Գյուլամիրյանը, Ք.Հովհաննիսյանը, Ա.Դալլաքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մանկավարժական գիտությունների թեկնածու, Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոս Մարիաննա Գիգոլի Ամիրաղյանին դոցենտի գիտական կոչման ներկայացնելու հարցը դրական երաշխավորությամբ առաջադրել համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը:

Ֆակուլտետի խորհրդի 25 անդամներից ներկա էին 23-ը, որոնցից կողմ քվեարկեցին 23-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:

ԼՍԵՑԻՆ – 2.Ուսանողների շրջանում իրականացված կրթական կարիքների ուսումնասիրության արդյունքների մասին հարցը:

Զեկուցող՝ուսխորհրդի նախագահ Անի Մարտիրոսյան

Անի Մարտիրոսյանը նշեց, որ ֆակուլտետի ուսանողական խորհրդի կողմից ուսանողների շրջանում իրականացվել է հարցում կրթական

կարիքների բացահայտման ուղղությամբ և գրանցվել են հետևյալ արդյունքները:

1.Կազմակերպել սեմինարների շարք՝գիտական, ուսումնական աշխատանքներ գրելուն ուղղված, ընդհուպ մինչև հոդվածներ:
2.Հնարավորություն տալ ուսանողներին փոխելու օտար լեզվի խումբը:
3.Խաղերի կենտրոնին զուգահեռ ֆակուլտետում ունենալ նաև մշակութային կենտրոններ՝կերպարվեստի, պարի, թատերական և այլն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ջ.Գյուլամիրյանը, Ք.Հովհաննիսյանը, Ա.Դալլաքյանը:

Ա.Դալլաքյանը նշեց, որ մինչև օտար լեզուների խմբեր ձևավորելը, դեկանատը կազմակերպում է հանդիպումներ օտար լեզուների դասախոսների և ուսանողների միջև, ուսանողները նախապես ժամանակ են ունենում ընտրություն կատարելու:Սակայն արդեն ուսումնական պարապմունքների կեսից կամ ավարտին, երբ ուսանողն արդեն մասնակցել է պարապմունքների, ընթացիկ և միջանկյալ ստուգումների, խումբը փոխելը խիստ խնդրահարույց է: Ուսանողները նախապես մտորելու և ընտրություն կատարելու ժամանակ ունենում են:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.Հանձնարարել գիտության և միջազգային համագործակցության հարցերով փոխդեկան Լ.Պողոսյանին և ֆակուլտետի ՈՒԳԸ աշխատանքները համակարգող Ջ.Մանուկյանին 2-րդ կիսամյակում նախաձեռնել ու իրականացնել գիտական, ուսումնական աշխատանքներ գրելուն նվիրված սեմինարների շարք (առցանց/առերես): Աշխատանքները կազմակերպել և արտացոլել ֆակուլտետի ՈՒԳԸ հարթակում:

2.Հանձնարարել ուսումնական հարցերով փոխդեկան Ա.Դալլաքյանին կազմակերպել նախնական հանդիպումներ 1-ին կուրսի ուսանողների և օտար լեզուների ամբիոնների միջև. առաջարկել ամբիոններին նախապես, մինչև առարկայական նկարագրերը տեղադրելը, առցանց տարածքում տեղադրել օտար լեզուներից պահանջվող պատրաստվածության, դասընթացների բովանդակության վերաբերյալ բացատրական նյութեր:

3. Հանձնարարել ուսանողական խորհրդի նախագահ Անի Մարտիրոսյանին՝ ներկայացնել մշակութային կենտրոնների ստեղծման և գործունեության իրենց տեսլականը, նախագիծ՝ առաջիկայում առավել առարկայական քննարկում ունենալու համար:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

Փետրվարի 14-ին՝ ժամը 10.00-ի, տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ:

Խորհրդի 25 անդամներից ներկա էին 22-ը:

Օրակարգ՝

1. Հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման մագիստոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին:

Զեկուցող՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ Լ.Միլիտոսյան

2. «Գուրգեն Էդիլյան» անվանական կրթաթոշակի թեկնածու ներկայացնելու հարցը:

Զեկուցող՝Հ.Խաչատրյան

ԼՍԵՑԻՆ - 1. Հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման մագիստոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին:

Զեկուցող՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ Լ.Միլիտոսյան

Քանի որ հանձնաժողովի նախագահը հիվանդության պատճառով ներկա չէր նիստին, հաշվետվությունը ներկայացրեց ֆակուլտետի խորհրդի նախագահը:

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Թոփուզյանը, Ք.Հովհաննիսյանը, Լ.Պողոսյանը, Հ.Խաչատրյանը:

Ա.Թոփուզյանը ունեցավ մի քանի նկատառում՝ առաջարկելով՝ 1/ հանձնարարել ու ձևակերպել այնպիսի թեմաներ, որոնք չլինեն ընդգրկուն, այլ նեղ լինեն, որպեսզի ուսումնասիրությունն ու հետազոտությունը խորը լինի: Նշեց նաև, որ դեռևս անելիքներ կան թեզի ամբողջականությունն ապահովելու հարցում, քանի որ հետազոտության նպատակներն ու խնդիրները չեն արտացոլվում եզրակացություններում անհրաժեշտ չափով, չեն արտահայտվում նաև մեթոդական հանձնարարականները, որոնց մասին ներածության մեջ նշվում է: Հարցախույզի հարցերն ամբողջովին չեն բացահայտում թեման և հետազոտության առջև դրված խնդիրները: Նա նշեց, որ անշուշտ նկատվում է առաջընթացը, սակայն տեմպերը շատ դանդաղ են, և ընդհանուր մակարդակն առայժմ բավարար չէ:

Ք.Հովհաննիսյանն առաջարկեց առանձին սեմինար կազմակերպել դասախոսների հետ/համար թեմաների, հարցախույզի հարցերի ձևակերպման, արդյունքների վերլուծության և այլ խնդիրների վերաբերյալ՝ խայտաբղետությունից ազատվելու և պահանջները միօրինակացնելու նպատակով, ինչին Թոփուզյանը կողմ արտահայտվեց՝ հավելելով, որ սեմինար պետք է կազմակերպել նաև ուսանողների համար: Հովհաննիսյանը նշեց նաև, որ Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնում փոփոխության են ենթարկվել թեմաները՝ համապատասխանեցվելով ՄԿԾ 1-ին կուրսում դասավանդվող՝ «Գիտական հետազոտության մեթոդներ» դասընթացին:

Լ.Պողոսյանը նշեց, որ «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն» դասընթացը նպատակ ունի հետազոտական աշխատանքի վերաբերյալ առավել ընդհանրական գիտելիքներ հաղորդելու և կարողություններ ձևավորելու, սակայն բացի մագիստրոսական աշխատանքից, ավելի ընդգրկուն աշխատանք կատարելու հնարավորություն, կարողություն չունեն ուսանողները: Ինչին Ա.Թոփուզյանն արձագանքեց, որ ծրագիրը պետք է ունենա զուտ գործնական բնույթ և ուղղվածություն. պետք է սովորեցնել ընդհանուր գիտահետազոտական մեթոդները, իսկ օրինակները՝ իրենց թեզի հետ պիտի կապված լինեն:

Հ.Խաչատրյանը նշեց, որ մկծ ուսումնական պլաններով մագիստրոսական թեզի պատրաստմանը բավականին մեծ ժամաքանակներ և կրեդիտներ են նախատեսված, առկա են տրամաբանորեն շաղկապված դասընթացներ ուղղված հետազոտությունների իրականացմանը՝ հետազոտությունների քանականկան և որակական մեթոդների, գիտական գրավոր խոսք կառուցելու վերաբերյալ և այլն: Նրա կարծիքով հարկավոր է, որ միասնական լինեն այդ դասընթացները դասավանդող դասախոսների և մագիստրոսական աշխատանքներ ղեկավարող դասախոսների աշխատանքները, հետազոտությունների կատարմանը ներկայացվող պահանջները: Հ.Խաչատրյանն առաջարկեց ամբիոններում քննարկել և առաջարկություններով հանդես գալ երկու շաբաթից՝ հաջորդ նիստի ընթացքում:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2.Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ կազմակերպել ամբիոնային քննարկումներ ամփոփիչ ատեստավորման նախագահի հաշվետվության շուրջ: Արդյունքները՝ առաջարկությունների և կոնկրետ գործողությունների տեսքով ներկայացնել հաջորդ խորհրդի նիստին:

Անցավ միաձայն:

ԼՍԵՑԻՆ - **2.** «Գուրգեն Էդիլյան» անվանական կրթաթոշակի թեկնածու ներկայացնելու հարցը:

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան

Ֆակուլտետի դեկան Հ.Խաչատրյանը ներկայացրեց «Գուրգեն Էդիլյան» անվանական կրթաթոշակի թեկնածու «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Զուլիետա Արթուրի Մանուկյանին: Նա նշեց, որ ուսանողուհու բոլոր տվյալները համապատասխանում են կրթաթոշակի համար անհրաժեշտ պանջներին, առկա են բոլոր փաստաթղթերը: Զուլիետա Մանուկյանը սովորում է գերազանց առաջադիմությամբ, իրականացնում ակտիվ հասարակական գործունեություն, այս ուսումնական տարի էլ մասնակցել է ԿԳՄՍ նախարարության «Լավագույն ուսանող» մրցույթին և զբաղեցրել 3-րդ մրցանակային տեղը :
/Փաստաթղթերի փաթեթը կից ներկայացված է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ս.Մարությանը, Ք.Հովհաննիսյանը, Ա.Դալլաքյանը, Ե.Մնացականյանը. Ա.Մարտիրոսյանը:

Ս.Մարությունը բնութագրեց Զ.Մանուկյանին որպես խելացի և համեստ ուսանողնուհի:

Անի Մարտիրոսյանը նշեց, որ արժանի է և՛ ուսման մեջ ունեցած առաջադիմությամբ, և՛ ուսխորհրդում կատարած աշխատանքներով:

Եվա Մնացականյանն ասաց, որ ուսանողուհին աչքի է ընկնում և՛ մասնագիտական, և՛ մարդկային բարձր որակներով, ստեղծագործում է, բարկիրթ մարդ է:

ՈՐՈՇԵՑԻՆ - «Գուրգեն Էդիլյան» անվանական կրթոթոշակի ներկայացնել «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Զուլիետա Արթուրի Մանուկյանի թեկնածությունը:

Խորհրդին ներկա 22 անդամներից կողմ քվեարկեցին 21, դեմ՝0, ձեռնպահ՝1 հոգի:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

Մարտի 1-ին՝ ժամը 12.00-ին, տեղի ունցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ: Խորհրդի 25 անդամներից ներկա էին 21-ը:

Օրակարգ՝

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի և հետազոտական աշխատանքների կազմակերպման մասին. *1-ին կիսամյակի արդյունքներ:*

Զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ

2. 2021-2022 ուստարվա առկա և հեռակա (1-4-րդ կուրսեր) ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի առաջին կիսամյակի քննաշրջանի և լուծարային փուլերի արդյունքների մասին:

Զեկուցող՝ Ա. Դալլաքյան

3.Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների և ընթացքի մասին.

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ և 4-րդ կուրսերի պրակտիկայի թղթապանակի պաշտպանության արդյունքներ,
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ» (միայն 4-րդ կուրս) բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ և 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի թղթապանակի պաշտպանության արդյունքներ, 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկաների նախապատրաստման մասին
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 2-րդ կուրսերի պրակտիկայի ընթացքի մասին (շարունակական ուսումնաճանաչողական պրակտիկա), 3-րդ կուրսերի պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների մասին
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի պրակտիկայի նախապատրաստական աշխատանքներ (մանկավարժահետազոտական պրակտիկա):

Զեկուցողներ՝ Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան, Լ.Պողոսյան

4.Ամբիոնների կրտսեր գիտաշխատողների (լաբորանտների) աշխատանաքային գործունեությունը ֆակուլտետում:

Զեկուցող՝ Արհմբյուրոյի նախագահ Ա. Խուգեյան

5.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - 1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի և հետազոտական աշխատանքների կազմակերպման մասին. *1-ին կիսամյակի արդյունքներ:*

Զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ

/Զեկուցումները կցվում են:/

Ամբիոնների վարիչները ներկայացրին, որ խնդրահարույց դեպքեր չկան: Միայն Ք.Հովհաննիսյանը նշեց, որ ԲԿԾ հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ուսանողնուհի Կարինե Սարգսյանը գտնվում է ԱՄՆ-ում և այժմ հիվանդ է թագավարակով, նրա հետ ավարտական աշխատանքի շուրջ աշխատանքները մինչ օրս իրականցվել են հեռավար: Նրա հարցը պարզ կլինի, այն ժամանակ, երբ և եթե կարողանա Հայաստան վերադառնալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ. Խաչատրյանը, Եվ. Մնացականյանը, Ա.Դալլաքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - 2. 2021-2022 ուստարվա առկա և հեռակա (1-4-րդ կուրսեր) ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի առաջին կիսամյակի քննաշրջանի և լուծարային փուլերի արդյունքների մասին:

Զեկուցող՝ Ա. Դալլաքյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ. Խաչատրյանը, Գ.Հայրապետյանը, Ա.Միքայելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - 3.Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների և ընթացքի մասին.

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ և 4-րդ կուրսերի պրակտիկայի թղթապանակի պաշտպանության արդյունքներ,
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ» (միայն 4-րդ կուրս) բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ և 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի թղթապանակի պաշտպանության արդյունքներ, 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկաների նախապատրաստման մասին
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 2-րդ կուրսերի պրակտիկայի ընթացքի մասին (շարունակական ուսումնաճանաչողական պրակտիկա), 3-րդ կուրսերի պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների մասին

- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի պրակտիկայի նախապատրաստական աշխատանքներ (մանկավարժահետազոտական պրակտիկա):

Զեկուցողներ՝ Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան, Լ.Պողոսյան

/Հաղորդումները կցվում են:/

Ա.Միքայելյանը հատկապես առաջարկեց վերանայել ԲԿԾ հեռակա ուսուցման 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի կազմակերպման ժամանակացույցը՝ հիմնավորելով, որ այդ կիսամյակում դեռևս նոր են սկսվում մայրենիի և մաթեմատիկայի մեթոդիկաների դասընթացները, առանց որոնց ուսանողները դժվարանում են մանկավարժական գործունեություն իրականացնել՝ դասավանդել:

Անդրադարձ կատարվեց նաև այն հարցին, որ կան ուսանողներ, որոնք չեն մասնակցել պրակտիկայի թղթապանակների պաշտպանությանը, և նրանց համար պաշտպանությունը կազմակերպվում է 1-ին կիսամյակի լուծարային փուլում, ինչպես նաև կան ուսանողներ, որոնք չեն կարողացել մասնակցել մանկավարժական պրակտիկային սահմանված ժամկետներում (նրանք ունեն ռեկտորատից թույլտվություններ), դրանք կազմակերպվել են 2022 թվականի փետրվարից անհատական գրաֆիկներով և հիմա էլ դեռ որոշները ընթացքի մեջ են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ա.Դալլաքյանը, Ջ.Գյուլամիրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:
2.Պրակտիկայի ղեկավարների վերլուծությունները, բարելավմանն ուղղված առաջարկությունները՝ հաշվետվության տեսքով ներկայացնել պրակտիկայի կենտրոն:

ԼՍԵՑԻՆ - 4.Ամբիոնների կրտսեր գիտաշխատողների (լաբորանտների) աշխատանաքային գործունեությունը ֆակուլտետում:

Զեկուցող՝ Արիմբյուրոյի նախագահ Ա. Խուգեյան

/Զեկուցումը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ք.Հովհաննիսյանը, Ջ.Գյուլամիրյանը, Հ.Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ – 1. Ուսանողների՝ 2021-2022 ուումնական տարվա 1-ին կիսամյակում ծավալած կամավորական աշխատանքը մասնագիտական գործունեություն ճանաչելու և արդյունքները հաստատելու մասին:

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան

Հ.Խաչատրյանը ներկայացրեց, որ 2021-2022ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում կամավորական աշխատանքներին մասնակցության ցանկություն էր հայտնել 18 ուսանող, սակայն նրանց մի մասը աշխատանքները կեսից դադարեցրել էր, մյուս մասի գործունեությունը և թղթապանակները չեն բավարարել մասնագիտական կամավորական

գործունեության պահանջներին: Միայն յոթ հոգի են բավարարել կամավորական աշխատանքներին ներկայացվող պահանջները և նրանց կատարած կամավորական աշխատանքները դիտարկվել է մասնագիտական: Այդ ուսանողների կատարած կամավորական աշխատանքի ժամերը, կարգի համաձայն, հաշվարկվել են և ձևավորվել են համապատասխան միավորներ: Ուստի առաջարկվում է կարգի համաձայն հաստատել այդ ուսանողների կողմից ծավալած կամավորական աշխատանքը որպես մասնագիտական գործունեություն և նրանց վաստակած միավորները, մուտք անել ՀՊՄՀ՝ «Ուսանողների մասնագիտական կամավորական գործունեության մատյան» էլեկտրոնային հարթակ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ջ.Գյուլամիրյանը, Ք.Հովհաննիսյանը, Ա.Դալլաքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Սկզբնական կրթության ֆակուլտետի ներքոնշյալ ուսանողների 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում ծավալած կամավորական աշխատանքը ճանաչել որպես մասնագիտական գործունեություն և նրանց տվյալները ներմուծել համալսարանի Google-classroom կրթական հարթակ. *«Ուսանողների մասնագիտական կամավորական գործունեության մատյան».*

1. *Միքայելյան Անահիտ Արթուրի - Տարրական մանկ. և մեթ, 3-րդ կուրս, 114ժամ, 2.85 միավոր*
2. *Մարգարյան Արմինե Կարապետի- Տարրական մանկ. և մեթ, 3-րդ կուրս, 115ժամ, 2.87 միավոր*
3. *Հայրապետյան Հայկանուշ Մուշեղի- Տարրական մանկ. և մեթ, 3-րդ կուրս, 111ժամ, 2.77 միավոր*
4. *Սիմոնյան Անի Արմենի- Ն/դ և մեթ, 3-րդ կուրս, 67 ժամ 50ր, 1.69 միավոր*
5. *Պետրոսյան Լուիզա Արմենի- Ն/դ մանկ. և մեթ, 3-րդ կուրս, 63 ժամ, 1.57 միավոր*
6. *Գրիգորյան Հեղինե Վրեժի- Տարրական մանկ. և մեթ, 3-րդ կուրս, 133 ժամ, 3.32 միավոր*
7. *Աղիլխանյան Սյուզաննա Սանասարի- Տարրական մանկ. և մեթ, 3-րդ կուրս, 133 ժամ, 3.32 միավոր*

Անցավ միաձայն:
Ֆակուլտետի խորհրդի 25 անդամներից ներկա էին 21-ը, որոնցից կողմ քվեարկեցին 21-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

Մարտի 22-ին՝ ժամը 12.00-ին, տեղի ունցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ: Խորհրդի 25 անդամներից ներկա էին 24-ը:

Օրակարգ՝

1. 2021-2022 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակների քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:

Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ

3. Միջազգային համագործակցության ուղղությամբ տարվող աշխատանքների մասին:

Զեկուցողներ՝ Լ. Պողոսյան ամբիոնների վարիչներ

4. Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների և ընթացքի մասին.

- հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի արդյունքներ,
- հեռակա ուսուցման համակարգի 3-5-րդ կուրսերի ուսանողների անհատական գրաֆիկով կազմակերպված պրակտիկաների ընթացք և արդյունքներ,
- առկա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստում,
- առկա ուսուցման համակարգի մագիստրոսի կրթական ծրագրերի 1-ին կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստում,
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի ընթացք:

Զեկուցողներ՝ Ա.Մքայելյան, Ա.Ղազարյան, Լ. Պողոսյան

5. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - 1. 2021-2022 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակների քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ջ.Գյուլամիրյանը, Ե. Մնացականյանը, Ալ.Դալլաքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - 2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:

Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ. Խաչատրյանը, Գ.Հայրապետյանը, Ա.Միքայելյանը:

Ամբիոնների վարիչները զեկուցեցին, որ ավարտական աշխատանքների և մագիստոսական թեզերի շուրջ աշխատանքներն ավարտին են մոտենում, և ամբիոնները պատրաստվում են նախապաշտպանություններ կազմակերպել:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2.Մարտի 28-ից ապրիլի 18-ը կազմակերպել առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ավարտական կուրսերի ուսանողների նախապաշտպանությունները, իսկ ապրիլի 19-ից ապրիլի 29-ը՝ հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի 5-րդ կուրսերի ուսանողների նախապաշտպանությունը:

ԼՍԵՑԻՆ - 3. Միջազգային համագործակցության ուղղությամբ տարվող աշխատանքների մասին:

Զեկուցողներ՝ Լ. Պողոսյան ամբիոնների վարիչներ

Լ.Պողոսյանը ներկայացրեց, որ առաջիկայում միջազգային համագործակցության բնագավառում աշխատանքներն ընթանում են երկու ուղղություններով: Դրանցից մեկը ՀՊՄՀ 100-ին նվիրված միջոցառումների շրջանակում առաջիկայում կազմակերպվող միջազգային գիտաժողովն է, որին մասնակցում են թե՛ դասախոսներ, թե՛ ուսանողներ: Հաջորդ ուղղությունը ֆակուլտետի ամբիոնների միջազգային համագործակցությունն է: Լ.Պողոսյանը նշեց, որ յուրաքանչյուր ամբիոն պետք է ակտիվացնի, թարմացնի իր ունեցած միջազգային կապերը, որոնք համավարակի պատճառով ընդհատվել էին՝ աշխատանքները համապատասխանեցնելով ամբիոնի գիտական ուղղվածությանը:

Նշվեց նաև , որ աշխատանքներ են տարվում օտար լեզուներով դասընթացներ մշակելու ուղղությամբ, որոնք կընդգրկվեն համալսարանի միջազգային ծրագրերի մեջ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ս.Մարությանը, Զ.Գյուլամիրյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - 4. Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների և ընթացքի մասին.

- հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի արդյունքներ,
- հեռակա ուսուցման համակարգի 3-5-րդ կուրսերի ուսանողների անհատական գրաֆիկով կազմակերպված պրակտիկաների ընթացք և ապրդյունքներ,
- առկա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի մ անկավարժական պրակտիկայի նախապատրաստում,
- առկա ուսուցման համակարգի մագիստրոսի կրթական ծրագրերի 1-ին կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստում,
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի ընթացք:

Զեկուցողներ՝ Ա.Միքայելյան, Ա.Ղազարյան, Լ. Պողոսյան

/Հաշվետվությունները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ք.Հովհաննիսյանը, Զ.Գյուլամիրյանը, Հ.Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ - Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու *Հեղինե Խաչատրյանի «Մանկան հոգեբանության դասախոսություններ»* ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու հարցը:

Զեկուցող՝ Լ.Պողոսյան:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյանը, Գ.Հայրապետյանը, Ջ.Գյուլամիրյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու *Հեղինե Խաչատրյանի «Մանկան հոգեբանության դասախոսություններ»* ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել հրատարակության:

Անցավ միաձայն. կողմ՝24, դեմ՝0, ձեռնպահ՝0:

ԼՍԵՑԻՆ - Սկզբնական կրթության ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի մասնագրի, ուսումնական պլանի հաստատման և ուսման վարձի սահմանման մասին:

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Թոփուզյանը, Ք.Հովհաննիսյանը, Ջ.Գյուլամիրյանը,

Լ.Պողոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ –

1. Հաստատել սկզբնական կրթության ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի մասնագիրը և ուսումնական պլանը:
2. Սկզբնական կրթության ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի մասնագիրը և ուսումնական պլանը ներկայացնել ՀՊՄՀ գիտական խորհրդի հաստատմանը:
3. Հեռակա ուսուցման համակարգի «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի ուսման վարձն առաջարկել սահմանել 390 հազար դրամի չափով:

Անցավ միաձայն. կողմ՝24, դեմ՝0, ձեռնպահ՝0:

ԼՍԵՑԻՆ - Ուսանողական միջազգային գիտաժողով կազմակերպելու հարցը:

Զեկուցող՝ Լ.Պողոսյան

Լ.Պողոսյանը տեղեկացրեց, որ ամեն տարի կազմակերպվող ուսանողական գիտաժողովն այս տարի նվիրված է լինելու ՀՊՄՀ հիմնադրման 100-ամյակին: «Սկզբնական կրթության արդի հիմնախնդիրները» խորագրով միջազգային գիտաժողովին մասնակցելու են ինչպես

համալսարանի ուսանողներն ու դասախոսները, այնպես էլ արտերկրի մեր գործընկերները : Գիտաժողովը տեղի է ունենալու մարտի 31-ին՝ առերես և առցանց տարբերակներով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Թոփուզյանը, Ք.Հովհաննիսյանը, Ջ.Գյուլամիրյանը, Ա.Մարտիրոսյանը:

Առաջարկվեց ընտրել կազմկոմիտե, և քննարկման դրվեցին թեկնածուների անունները՝ ֆակուլտետի փոխդեկան Լ.Պողոսյանի և ամբիոնների վարիչներ Ջ.Գյուլամիրյանի, , Վ.Կարապետյանի և Ք.Հովհաննիսյանի:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընտրել գիտաժողովի խմբագրական խորհուրդ հետևյալ կազմով՝

1. Լ.Պողոսյան՝ խմբագրական խորհրդի նախագահ
2. Ա.Թոփուզյան՝ խմբագրական խորհրդի անդամ
3. Ջ.Գյուլամիրյան՝ խմբագրական խորհրդի անդամ
4. Վ.Կարապետյան՝ խմբագրական խորհրդի անդամ
5. Ք.Հովհաննիսյան՝ խմբագրական խորհրդի անդամ

Որոշումն ընդունվեց միաձայն:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

Ապրիլի 28-ին՝ ժամը 11.00-ին, տեղի ունցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ: Խորհրդի 25 անդամներից ներկա էին 23-ը:

Օրակարգ՝

1. 2021-2022 ուստարվա առկա ուսուցման համակարգի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

2. 2021-2022 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակների քննաշրջանի արդյունքների և լուծարային փուլերի կազմակերպման մասին:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

3. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանության արդյունքների քննարկում և հաստատում:

Զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ

4.Մանկավարժական պրակտիկաների ընթացքի ներկայացում և քննարկում.

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 2-րդ և 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկաների ընթացք,
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրերի 1-ին կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքներ,
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքներ:

Զեկուցողներ՝ Ա.Միքայելյան, Ա.Ղազարյան, Լ. Պողոսյան

5.Ամբիոնների՝ դպրոցների, մանկապարտեզների և այլ կրթական հաստատությունների հետ համագործակցության մասին:

Զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ

6. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - 2021-2022 ուստարվա առկա ուսուցման համակարգի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ք.Հովհաննիսյանը, Ս.Մարությանը, Ալ.Դալլաքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - 2. 2021-2022 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակների քննաշրջանի արդյունքների և լուծարային փուլերի կազմակերպման մասին:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ջ.Գյուլամիրյանը, Գ.Հայրապետյանը, Ա.Միքայելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. 2021-2022 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակների քննաշրջանի լուծարային փուլերի կազմակերպման և արդյունքների մասին հարցը լսել հաջորդ նիստում, քանի որ քննաշրջանը դեռևս ընթացքի մեջ է:

ԼՍԵՑԻՆ - 3. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանության արդյունքների քննարկում և հաստատում:

Զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ

Ա.Թոփուզյանը նշեց, որ երկու ուսանող խնդիրներ ունեն. դրանցից մեկը՝ «Մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի ուսանողուհի Դեզդեմոնա Սարգսյանը, առողջական խնդիրներ ունի. թեև աշխատանքը պատրաստ է, սակայն կկարողանա արդյոք մասնակցել պաշտպանությանը, թե ոչ, դեռևս պարզ չէ: Մյուսը՝ հեռակա ուսուցման համակարգի «Մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի ուսանողուհի Սյուզաննա Խաչումյանն է, ով տարկետում է ձևակերպել: Մանկավարժության ամբիոնի գծով աշխատանքներ գրող մնացած ուսանողները պատրաստ են և երաշխավորված են պաշտպանության:

Ջ.Գյուլամիրյանը տեղեկացրեց, որ միայն հեռակա ուսուցման համակարգի «Մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի ուսանողուհի Բատիկյան Սեդայի աշխատանքը պատրաստ չէ.նա առայժմ չի ներկայացրել ավարտուն աշխատանքը, քանի որ նրա հետ կապվել չէր լինում: Սակայն արդեն կապ է հաստատվել և ուսանողուհին խոստացել է հաջորդ օրը ներկայացնել աշխատանքը:

Ք.Հովհաննիսյանը ներկայացրեց, որ թեև ընթացիկ խնդիրներ ու բարդություններ եղել են, սակայն ամեն ինչ հարթված է, և բոլոր ուսանողները երաշխավորվել են պաշտպանության:

Լ.Մանուկյանը հաղորդեց, որ առկա համակարգի ուսանողների նախապաշտպանություններն իրականացված են եղել մինչ իր նշանակումը, և քաղվածքը ներկայացված է, իսկ հեռակա ուսուցման համակարգի նախապաշտպանություններն ընթացքի մեջ են, և երաշխավորության մասին քաղվածքները ժամկետում կներկայացվեն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ս.Մարությանը, Ջ.Գյուլամիրյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.Ընդունել ի գիտություն:

2. ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների երաշխավորման մասին քաղվածքները ներկայացնել մինչև մայիսի 6-ը:

ԼՍԵՑԻՆ - 4.Մանկավարժական պրակտիկաների ընթացքի ներկայացում և քննարկում.

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 2-րդ և 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկաների ընթացք,

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրերի 1-ին կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքներ,
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքներ:

Զեկուցողներ՝ Ա.Մքայելյան, Ա.Ղազարյան, Լ. Պողոսյան

/Հաշվետվությունները կցվում են:/

Իր դիտարկումներին Ա.Միքայելյանը հավելեց նաև, որ մագիստրոսների համար շատ օգտակար էր այն հանգամանքը, որ պրակտիկան համընկավ ուսանողական գիտաժողովի հետ, և մագիստրոսներն ակտիվորեն մասնակցեցին մասնաճյուղերի աշխատանքներին: Հաջորդ նկատառումն այն մասին էր, որ կարևոր է հետամուտ լինել, որպեսզի մասնագտական կրթություն չունեցող մագիստրոսները կարողանան պրակտիկա անցնել նաև դպրոցներում: Ա.Միքայելյանը նաև առաջարկեց դիմել նաև հոգեբանության ամբիոնին, որ Սկզբնական կրթության ֆակուլտետում պրակտիկայի շրջանակում աշխատող դասախոսները չփոփոխվեն և դասաբաշխման ժամանակ նկատի առնվի այդ հանգամանքը, որպեսզի թիմային աշխատանքն արդյունավետ ընթանա:

Լ.Պողոսյանը նորից անդրադարձավ այն խնդրին, որ անհրաժեշտ է մշակել գնահատման միասնական պահանջներ:Նա նշեց, որ գնահատման ժամանակ պետք է լինել չափազանց պահանջկոտ և հիմնվել առարկայական նկարագրի վերջնարդյունքների վրա, այլ ոչ թե նկատի ունենալ միայն մասնակցությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ք.Հովհաննիսյանը, Լ.Մանուկյանը, Հ.Խաչատրյանը:

Հ.Խաչատրյանը հատուկ շնորհակալություն հայտնեց պրակտիկայի ղեկավարներին՝ պրակտիկայի շրջանակում կազմակերպվող աշխատանքները ղեկավարելու համար: Հատուկ շնորհակալություն հայտնեց Ջ.Գյուլամիրյանին:

Ք.Հովհաննիսյանը իր խոսքում նշեց, որ մագիստրոսական պրակտիկան անցել է շատ հագեցած, մագիստրոսների ակտիվ մասնակցությամբ

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - 5. Ամբիոնների՝ դպրոցների, մանկապարտեզների և այլ կրթական հաստատությունների հետ համագործակցության մասին:

Զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ

Ջ.Գյուլամիրյանը տեղեկացրեց, որ այս տարի դպրոցների հետ ընդգծված աշխատանքներ չեն տարվել, քանի որ դասախոսները չափազանց ծանրաբեռնված են եղել, սակայն պատրաստ են առաջիկա հանդիպումների՝ աշխատանքների թեմաներն ու դրանց բաժինները և սեպտեմբերից աշխատանքները կվերսկսվեն:

Ք.Հովհաննիսյանը ներկայացրեց, որ ամբիոնը կապ է հաստատել և պահում է այն նախկին 200 շրջանավարտների հետ առցանց ձևաչափով: Կազմակերպվել է երկու հանդիպում-քննարկում, որից հետո 16 դասվարների հետ աշխատանքները շարունակվել են: Նրանք դասեր են անցկացրել և արդյունքում քննար-

կումներ են եղել, որոնք օգտակար ենեղել նաև դասախոսական կազմի համար: Աշխատանքային կապերը պահպանվում են նաև դպրոցների տնօրենների հետ:

Ս.Մարությանը տեղեկացրեց, որ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկայի ամբիոնը շարունակել է իր համագործակցությունը մանկապարտեզների հետ և աշխատանքը շարունակում է պրակտիկայի շրջանակում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյանը, Գ.Հայրապետյանը, Ջ.Գյուլամիրյանը, Ք.Հովհաննիսյանը, Հ.Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ակտիվացնել ամբիոնների կապերն ու համագործակցությունը դպրոցների, մանկապարտեզների և կրթական կառույցների հետ:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ - 1. «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրերի 2022-23 ուստարվա ընդունելության հարցաշարերերի հաստատման հարցը:

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Թոփուզյանը, Ք.Հովհաննիսյանը, Ջ.Գյուլամիրյանը, Լ.Մանուկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրերի 2022-23 ուստարվա ընդունելության հարցաշարերը:

ԼՍԵՑԻՆ - 2. Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի հայցորդ *Ժաննա Հարությունյանի* ատենախոության՝ *«Շախմատային նախագիտելիքի ձևավորման մանկավարժական պայմանները ավագ նախադպրոցական տարիքում»* վերտառությամբ թեմայի՝ *«Շախմատային նախագիտելիքի ձևավորման մանկավարժական պայմանները նախադպրոցական հաստատություններում»* ձևակերպմամբ վերահաստատման և որպես գիտական ղեկավար՝ մ.գ.թ., պրոֆեսոր Ս.Մարությանի թեկնածության վերահաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ջ.Գյուլաիրյանը, Ք.Հովհաննիսյանը, Ս.Մարությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ՀՊՄՀ գիտական խորհրդի վերահաստատմանը ներկայացնել Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի հայցորդ *Ժաննա Հարությունյանի* ատենախոության թեման՝ *«Շախմատային նախագիտելիքի ձևավորման մանկավարժական պայմանները նախադպրոցական հաստատություններում»* ձևակերպմամբ՝ որպես գիտական ղեկավար վերահաստատելով մ.գ.թ., պրոֆեսոր Ս.Մարությանի թեկնածությունը:

Անցավ միաձայն:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

Մայիսի 31-ին՝ ժամը 11.00-ին, տեղի ունցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ: Խորհրդի 25 անդամներից ներկա էին 21-ը:

Օրակարգ՝

1. 2021-2022 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

2. 2021-2022 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական

ծրագրերի ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

3. Մանկավարժական և մանկավարժահետազոտական պրակտիկաների արդյունքների ամփոփում:

Զեկուցողներ՝Ա.Միքայելյան, Ա.Ղազարյան, Լ. Պողոսյան

4. Առկա (առաջին կուրս) և հեռակա (առաջին և երկրորդ կուրսեր) ուսուցման համակարգերի մագիստրոսների մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:

Զեկուցողներ՝ամբիոնների վարիչներ

5. Ընթացիկ հարցեր:

2021-2022 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակների քննաշրջանի լուծարային փուլերի արդյունքների մասին:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

ԼՍԵՑԻՆ - **1.** 2021-2022 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցող՝Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

Փոխդեկան Ա.Դալլաքյանը տեղեկացրեց, որ ներկայացվելու են միայն առկա ուսուցման համակարգի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները, քանի որ հեռակա ուսուցման համակարգի դասերը պետք է սկսվեն 06.06.2021-ից , և առայժմ վաղ է քննաշրջանին նախապատրաստվելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ք.Հովհաննիսյանը, Ս.Մարությանը, Ա.Միքայելյանը, Հ.Խաչատրյանը:

Հ.Խաչատրյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ ս/թ ապրիլի 20-ին կազմակերպվել է հանդիպում ավարտական կուրսերի ուսանողների հետ, որտեղ քննարկվել են մագիստրոսական կրթական ծրագրերից ուսանողների ակնկալիքները և սպասումները: Հանդիպմանը մասնակցել են նաև ամբիոնների վարիչները: Այդ համատեքստում ուսանողները ցանկություն են հայտնել մագիստրատուրայում ուսումնառությունը շարունակելու պարագայում ապահովել ճկուն ժամանակացույց՝ դպրոցում աշխատանքն ու ուսումնառությունը համատեղելու հնարավորության առումով, ինչպես նաև հանրակրթության ոլորտում կատարվող բարեփոխումները մշտապես արտացոլվեն ուսումնական պլաններում՝ որպես դասընթացներ/ ընտրովի դասընթացներ:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել ուսումնական հարցերով փոխդեկան տիկին Դալլաքյանին մագիստրատուրայի դասացուցակները կազմելիս նկատի ունենալ ուսանողների կրթական հաստատություններում աշխատելու հանգամանքը, և օգտագործել նաև ուսումնական պարապմունքները առերես և առցանց ձևաչափերով (համակցված) կազմակերպելու հնարավորությունները:

3. Հանձնարարել ամբիոնների վարիչներին ընտրովի դասընթացների բազան վերանայելիս նկատի ունենալ նաև հանրակրթության ոլորտի բարեփոխումները:

ԼՍԵՑԻՆ - **2.** 2021-2022 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ջ.Գյուլամիրյանը, Գ.Հայրապետյանը, Ա.Միքայելյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **3.** Մանկավարժական և մանկավարժահետազոտական պրակտիկաների արդյունքների ամփոփում:

Զեկուցողներ՝ Ա.Միքայելյան, Ա.Ղազարյան, Լ. Պողոսյան

/Հաշվետվությունները կցվում են:/

Ա.Միքայելյանը տեղեկացրեց, որ ուսանողների առաջարկություններում շատ է հնչում այն միտքը, որ շարունակական պրակտիկայի ժամանակը երկարացվի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ջ.Գյուլամիրյանը, Ք.Հովհաննիսյանը:

Հ.Խաչատրյանն առաջարկեց ուսումնասիրել դաշտը, առկա հնարավորությունները և կրթական ծրագրերի ուսումնական պլանների վերանայման ժամանակ առաջարկություն ներկայացնել ավարտական կուրսերի երկրորդ կիսամյակներում ևս շարունակել մանկավարժական պրակտիկան: Նման մոտեցումը կարող է դրական ազդեցություն ունենալ ավարտական աշխատանքների հետազոտական բաղադրիչի վրա:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - 4. Առկա (առաջին կուրս) և հեռակա (առաջին և երկրորդ կուրսեր) ուսուցման համակարգերի մագիստրոսների մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:

Զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ

Ք.Հովհաննիսյանը ներկայացրեց, որ աշխատանքները դժվար են ընթանում, քանի որ առայժմ դրանք նվիրված են մասնագիտական կրթություն չունեցողների գիտելիքների բացը լրացնելուն:
Ջ.Գյուլամիրյանը տեղեկացրեց, որ մայրենիի ամբիոնում բոլոր աշխատանքներն ընթացքի մեջ են, և խնդիրներ չկան:
Ս.Մարությանը ևս ասաց, որ հատուկ խնդիրներ չկան, թեև ուսանողներն առայժմ ամբողջ ներուժով չեն աշխատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը , Լ.Մանուկյանը, Ե.Մնացակյանը:

Հ.Խաչատրյանն ասաց, որ մագիստրոսների աշխատանքները կազմակերպելիս հարկավոր է առաջնորդվել ամբիոններում առկա, հաստատված մագիստրոսների աշխատանքային պլանի պահանջներով:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ - 2021-2022 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակների քննաշրջանի լուծարային փուլերի արդյունքների մասին:

Զեկուցողներ՝ Ա.Դալլաքյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ալլա Դալլաքյան, Ջ.Գյուլամիրյանը, Լ.Մանուկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13

Հունիսի 22-ին՝ ժամը 11.30-ին, տեղի ունցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ: Խորհրդի 25 անդամներից ներկա էին 22-ը: Նիստին ներկա էին Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ա.Մանուկյանը, ուսանողների կամավորական աշխատանքի պատասխանատու Ի.Պոնոմարենկոն, պրակտիկայի ղեկավար Ա.Ղազարյանը:

Օրակարգ ՝

1. 2021-2022 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին: — Ա.Դալլաքյան

2. 2021-2022 ուստարվա առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի և հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին: — Հանձնաժողովների նախագահներ

3. Մանկավարժական պրակտիկաների և թղթապանակների պաշտպանության արդյունքների մասին. — Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 2-րդ կուրսեր (շարունակական ուսումնաճանաչողական մանկավարժական պրակտիկա)
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսեր (կիրառական մանկավարժական պրակտիկա)

4. Անդրադարձ ֆակուլտետի ենթակառույցների կատարած աշխատանքներին.

- Որակի ապահովման խումբ — Լ.Պողոսյան,
- Ուսումնամեթոդական խումբ — Զ.Գյուլամիրյան
- Համալսարան- դպրոց համագործակցություն, դիմորդների մասնագիտական կողմնորոշում — Ա.Խուգեյան
- Կամավորական գործունեություն — Ի.Պոնոմորենկո

5. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - **1.** 2021-2022 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

Փոխդեկան Ա.Դալլաքյանը տեղեկացրեց, որ հարցն անհրաժեշտ է հետաձգել հաջորդ՝ վերջին նիստին, քանի որ առկա համակարգի քննաշրջանը դեռևս ընթացքի մեջ է, իսկ հեռակա համակարգի քննաշրջանը սկսվելու է 27.06.2022-ից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ս.Մարությանը, Ալ.Դալլաքյանը:

Հ.Խաչատրյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ պայմանավորված ուսումնական գործընթացի կազմակերպման ձևաչափերի և ժամանակացույցերի փոփոխմամբ պայմանավորված նախատեսված որոշ հարցեր ժամկետներում հնարավոր չի լինում քննարկել, ուստի երբեմն որոշ հարցերի քննարկումները տեղափոխվում են հաջորդ նիստեր:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հարցի քննարկումը տեղափոխել և լսել խորհրդի հաջորդ նիստին:

ԼՍԵՑԻՆ - **2.** 2021-2022 ուստարվա առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի և հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին:

Զեկուցողներ՝ հանձնաժողովների նախագահներ
Ա.Չատինյան, Ս.Սողոյան

/Հաշվետվությունները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Զ.Գյուլամիրյանը, Գ.Հայրապետյանը, Հ.Խաչատրյանը:

Հ.Խաչատրյանը նշեց, որ ավարտական աշխատանքների պատրաստման, պաշտպանության և ամփոփման գործընթացը անընդհատ գործընթաց է, այդ փուլերը փոխպայմանավորված են և, բնական է, ունեն բարելավման կարիք, ուստի հանձնաժողովների նախագահների բոլոր նկատառումները կարևոր են ամբիոնների հետագա աշխատանքի բարելավման համար:

Խոսք խնդրեց նաև Ա.Մանուկյանը: Նա նշեց, որ թերևս կարիք կա փոխելու ավարտական աշխատանքների պատրաստման նկատմամբ ընդհանուր վերաբերմունքը, երբ ամբողջ պատասխանատվությունն ընկած է ղեկավարի վրա, իսկ ուսանողը կարծես հարակից մասնակից լինի: Անհրաժեշտ է գնահատման ինչ-ինչ լծակներ ստեղծել, որպեսզի ուսանողը ոչ միայն պատասխանատու լինի, այլև շահագրգիռ:

Հ.Խաչատրյանը նշեց, որ մագիստրոսական կրթական ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր կիսամյակ մագիստրոսական թեզերի պատրաստմանը բավականին մեծ թվով կրեդիտներ են հատկացվում, նախատեսված են նաև ուսանողի հետազոտական աշխատանքի գնահատման գործիքներ: Այլ հարց է ավարտական աշխատանքները բակալավրի կրթական ծրագրում: Այստեղ արդյունավետ աշխատանքի գործիքակազմի անհրաժեշտություն կա. և՛ ժամանակն է քիչ , և՛ չկան աշխատանքների ընթացքի վերահսկման գործիքներ: Չնայած ավարտական աշխատանքների և պաշտպանության համար նախատեսված է 7 կրեդիտ, բայց դրա կիրառման մանրամասները և հնարավորությունները հստակեցված և առանձնացված չեն: Հ»Խաչատրյանն առաջարկեց ամբիոններում քննարկել և առաջարկություններ ներկայացնել:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.Ընդունել ի գիտություն:

2.Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ ամբիոններում քննարկել և ներկայացնել առաջարկություններ ավարտական աշխատանքների կազմակերպման, ընթացքի և գնահատման ուղղությամբ:

ԼՍԵՑԻՆ - 3. Մանկավարժական պրակտիկաների և թղթապանակների պաշտպանության արդյունքների մասին.

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 2-րդ կուրսեր (շարունակական ուսումնաճանաչողական մանկավարժական պրակտիկա)
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսեր (կիրառական մանկավարժական պրակտիկա)

Զեկուցողներ՝ Ա.Միքայելյան, Ա.Ղազարյան, Լ. Պողոսյան

/Հաշվետվությունները կցվում են:/

Ա.Միքայելյանը տեղեկացրեց, որ ԲԿԾԱ երկրորդ կուրսի պրակտիկայի պաշտպանությունը դեռևս տեղի չի ունեցել, որստի հաշվետվության մեջ այն բաց է մնացել:

Երկու ուսանող հարգելի պատճառով չեն ներկայացել պաշտպանության. նրանց թղթապանակների պաշտպանությունը կկազմակերպվի լուծարային փուլում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Զ.Գյուլամիրյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. Պրակտիկայի կազմակերպմանը վերաբերող առաջարկություններն առանձին հաշվետվության տեսքով ներկայացնել պրակտիկայի վարչություն:

ԼՍԵՑԻՆ - 4. Անդրադարձ ֆակուլտետի ենթակառույցների կատարած աշխատանքներին.

- Որակի ապահովման խումբ
- Ուսումնամեթոդական խումբ
- Համալսարան- դպրոց համագործակցություն, դիմորդների մասնագիտական կողմնորոշում
- Կամավորական գործունեություն

Զեկուցողներ՝ Լ.Պողոսյան, Զ.Գյուլամիրյան , Ա.Խուգեյան, Ի.Պոնոմորենկո

/Հաշվետվությունները կցվում են:/

Լ.Պողոսյանը տեղեկացրեց, որ ուսումնական գործընթացների և փաստաթղթավարության դիտարկումների և վերլուծությունների արդյունքում առաջիկայում պետք է բովանդակային փոփոխություններ կատարվեն մասնագիտական կրթական ծրագրերի մասնագրերում , դասընթացների ուսումնամեթոդական փաթեթներում և առարկայական նկարագրերում, կատարվի հատկապես առաջադրանքների, ստուգման գործիքակազմի համապատասխանեցում վերջնարդյունքների պահանջներին: Այդ աշխատանքների վերաբերյալ առաջիկայում վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվելու:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը , Լ.Մանուկյանը, Գ.Հայրապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.Ֆակուլտետի ենթակառուցվածքների պատասխանատուների ներկայացրած հաշվետվություններն ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել պրակտիկայի ղեկավարներին ուսումնական տարվա հենց սկզբից օգտագործել պրակտիկայի հնարավորությունները սովորողների հետազոտական կարողությունները բարելավելու համար: Մասնավորաբար՝

   ա) մանկապարտեզներում և դպրոցներում կազմակերպել հարցումներ, ուսումնասիրություններ կրթության ոլորտի արդիական և կարևորոգույն հարցերի հետ կապված, արդյունքները տրամադրել կրթական հաստատություններին,

   բ) դուրս բերել և հավաքագրել իրական, կրթական հաստատություններին հուզող, այնտեղ առկա խնդիրներ, կազմել այդ հիմնահարցերի ցանկը և այն տրամադրել ֆակուլտետի ուսումնամեթոդական հանձնաժողովին,

   գ)հարցումների, զրույցների արդյունքները ներառել պրակտիկայի թղթապանակներում և կուրսային աշխատանքներում:

3. Հանձնարարել ուսումնամեթոդական հանձնաժողովին այդ հիմնահարցերը ձևակերպել որպես հետազոտական աշխատանքների թեմաներ և տրամադրել ֆակուլտետի ամբիոններին՝ համալրելու ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաներիի բազան:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14

Հուլիսի 7-ին՝ ժամը 11.00-ին, տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի ընդլայնված նիստը:

Խորհրդի 25 անդամներից ներկա էին 23-ը: Նիստին մասնակցում էին նաև ֆակուլտետի ամբիոնների դասախոսները:

Օրակարգ՝

1. 2021-2022 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի և լուծարային փուլերի նախապատրաստական աշխատանքների մասին:	Ա.Դալլաքյան
2. Ֆակուլտետի 2021-2022 ուստարվա ուսումնադաստիարակչական, հետազոտական աշխատանքների և խորհրդի ընդունած որոշումների կատարման մասին:	Հ.Խաչատրյան
3. Կրթական ծրագրերի և ուսումնական պլանների քննարկում: Ամբիոնների որակի ապահովման և դասավանդման բարելավման ուղղությամբ կատարված աշխատանքների մշտադիտարկման արդյունքներ:	Լ.Պողոսյան

ԼՍԵՑԻՆ - 1. 2021-2022 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի և լուծարային փուլերի նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

Ա.Դալլաքյանը ներկայացրեց, որ 26.08.2020 - 08.09.20222 ժամանանակահատվածում կկազմակերպվեն հեռակա ուսուցման համակարգի քննությունները, և անհրաժեշտ է, որ դասախոսները վաղօրոք տեղյակ լինեն և նախապատրաստեն քննական տոմսերը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Զ.Գյուլամիրյանը, Հ.Խաչատրյանը, Լ.Պողոսյանը:

Հ.Խաչատրյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ 2021-22 ուսումնական տարվա ընթացքում ուսումնական գործընթացի կազմակերպման, ժամկետների հետ կապված համալսարանի համապատասխան կառույցների կողմից, քննարկումների արդյունքում, որոշակի փոփոխությունների են արվել, հետևաբար դեռևս 2021 թվականի սեպտեմբերին հաստատված ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանով նախատեսված որոշ հարցերի քննարկումները ժամկետների առումով տեղաշարժվել են:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **2.**Հաշվետվություն ֆակուլտետի 2021-2022 ուստարվա ուսումնադաս-տիարակչական, հետազոտական աշխատանքների և խորհրդի ընդունած որոշումների կատարման մասին:

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ալ.Դալլաքյանը, Ս.Գրիգորյանը, Զ.Գյուլամիրյանը, Ք.Հովհաննիսյանը:

Առաջարկություն եղավ կատարված աշխատանքները գնահատել բավարար։

ՈՐՈՇԵՑԻՆ –Հաստատել սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նախագահի ներկայացրած 20212022 ուստարվա հաշվետվությունը և բավարար գնահատել կատարված աշխատանքները. *կողմ՝23, դեմ՝0, ձեռնպահ՝0։*

ԼՍԵՑԻՆ - 3.Կրթական ծրագրերի և ուսումնական պլանների քննարկում: Ամբիոնների որակի ապահովման և դասավանդման բարելավման ուղղությամբ կատարված աշխատանքների մշտադիտարկման արդյունքներ:

Զեկուցող՝ Լ.Պողոսյան

/PP ներկայացումը կցվում է:/

Այս հարցի առնչությամբ փոխդեկան Լուսինե Պողոսյանը ներկայացրեց ֆակուլտետի որակի ապահովման խմբի կողմից իրականացված՝ «Ուսանողների բավարարվածությունը կրթական ծրագրից» հարցման արդյունքները: Նա նաև նշեց, որ դրանք կարող են օգտակար լինել կրթական ծրագրերի, առարկայական նկարագրերի և ուսումնամեթոդական փաթեթների վերանայման գործընթացում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Լ. Տեր-Գրիգորյանը, Ջ.Գյուլամիրյանը, Լ.Պողոսյանը, Հ. Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան